ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

18 ՀՈՒՆՎԱՐԻ
2024 թ.
№ 1 (1117)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Հայտնի է 2023 թվականի «Լավագույն ուսանող» մրցույթի հաղթողը

Մանկավարժական համալսարանի Աղավնաձորի ուսումնամարզական բազայում հունվարի 14-ին տեղի ունեցավ «Լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխությունը: Այս տարի «Լավագույն ուսանող» ճանաչվեց Սկզբնական կրթության ֆակուլտետի Տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Արուս Այվազյանը:

«Լավագույն ուսանող-2023» մրցույթին ներկա էին ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը, Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը և Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության պետ Սամվել Ասատրյանը:

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը կարևորեց ուսանողների հասարակական ակտիվությունը, ուսումնագիտական աշխատանքներում ներգրավվածությունը՝ մաղթելով բոլորին մասնագիտական աճի զարգացում, նաև ակնկալելով, որ անձնային և կրթական որակների բարձրացմամբ կարդարացնեն Մանկավարժական համալսարանի սպասումները:

Տարբեր ֆակուլտետներից նախապես ընտրված 10 լավագույն ուսանողներին ռեկտորը հավաստագրերը և նվերներ հանձնեց:

«2010 թվականից ի վեր Ուսանողական խորհուրդը կազմակերպել է ՀՊՄՀ «Լավագույն ուսանող» մրցույթ-մրցանակաբաշխությունը, որի նպատակն է խրախուսել ուսանողներին՝ նրանց համար ստեղծելով լավ սովորելու, գիտական, կամավորական աշխատանքներում ներգրավվելու շարժառիթ»,-ասում է Ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանը:

Այս տարի նույնպես 10 ֆակուլտետի լավագույնները 3 անմոռանալի օր կանցկացնեն Վրաստանում:

Ուսանողական մրցանակաբաշխությունը բուհում ուսանողների միջև առողջ մրցակցություն ստեղծելու գրավականներից մեկն է, որ տարեցտարի նոր ուսանողների է ընդգրկում ու բացահայտում:

«Զգացողություններս մեկը մյուսին հերթ չտալով առաջ են ընկել ու իրար խառնվել՝ հուզմունք, հպարտություն, ուրախություն,- ասում է 2023 թվականի լավագույն ուսանող ճանաչված Արուս Այվազյանը:- Շա՜տ շնորհակալ եմ Մանկավարժական համալսարանին՝ իմ մայր բուհին, նման հնարավորություն ընձեռելու համար՝ ներկայացնել ինձ և իմ ֆակուլտետը «Լավագույն ուսանող» մրցույթում: Հպարտ եմ այս բարձր գնահատականին արժանանալու համար:

Բոլոր մասնագիտությունները կարևոր են. ուսուցչինը՝ պարտավորեցնող, բարդ ու ստեղծարար: Ուսուցիչն ինձ համար վե՛հ, շա՜տ բարձր արժեք է... Հպա՛րտ եմ, որ ե՛ս էլ ուսուցիչ դառնալու ճանապարհին եմ իմ մայր բուհի, դասախոսների շնորհիվ:

Վստահաբար կարող եմ ասել, որ ուսուցիչ ծնվում են, ոչ թե դառնում: Մայրս ուսուցչուհի է, և առաջին հերթին նրա օրինակն է ինձ համար ուղեկից եղել: Շնորհակալ եմ ու պարտական ծնողներիս՝ իմ գենետիկ կոդի համար:

Իմ բոլոր հաջողությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ երբեք չեմ դադարում սովորել: Իմ տեսլականն է մշտապես լինել առաջատարներից ու լավագույններից մեկը իմ մասնագիտության մեջ:

Անասելի շնորհակալ եմ իմ ֆակուլտետին, ողջ պրոֆեսորադասախոսական անձնակազմին՝ իմ կողքին լինելու, ինձ աջակցելու, հավատալու և թևեր տալու համար: Այս հաղթանակը պարտավորեցնող է, քանի որ այն հաստատուն քայլերով ուղենշում է ավելի մեծ հաղթանակ՝ մասնագիտության մեջ կայանալու, հաստատվելու, այն իրացնելու և ուսուցչի վեհ առաքելությունը պատվով կատարելու համար:

Ուզում եմ շնորհավորել բոլոր ֆակուլտետների լավագույն ուսանողներին: Այս աստիճանին հասնելը արդեն իսկ մեծ հպարտություն և ձեռքբերում է բոլորիս համար»:



Պարույր Սևակ–100

ՀԱՅԱՍՏԱՆ

Իմ քաղցրանո՜ւն,
Իմ բարձրանո՜ւն,
Իմ տառապա՛ծ,
Իմ փառապա՛նծ:
Հների մեջ՝ դու ալեհեր,
Նորերի մեջ՝ նոր ու ջահել,
Դու՝ խաղողի խչմարված վազ,
Վշտերդ՝ ջուր, ինքդ ավազ,
Դու՝ բարդենի սաղարթաշատ,
Առուն ի վար փռված փշատ,
Դու՝ կիսավեր ամրոց ու բերդ,
Մագաղաթյա մատյանի թերթ.
Դու՝ Զվարթնոց-ավեր տաճար,
Կոմիտասյան ծիրանի ծառ,
Դու՝ ջրաղաց խորունկ ձորում,
Դու՝ հորովել անուշ ծորուն,
Փայլ գութանի արծաթ խոփի,
Դու՝ նե՛տ, նիզա՛կ, մկո՛ւնդ կոպիտ,
Դու՝ հայրենի ծխանի ծուխ,
Դու՝ անգի՛ր վեպ, դու Սասնա ծո՜ւռ...
Իմ փառապա՛նծ,
Իմ տառապա՛ծ,
Իմ բարձրանո՜ւն,
Իմ քաղցրանո՜ւն:
Դու մրգերի շտեմարան,
Ոսկեվազյան գինու մառան,
Դու՝ թավշե դեղձ, դու՝ փրփուր հաց,
Արտաշատյան խաղող սևաչ,
Դու Սևանի վառվող կոհակ,
Երևանի սյուն ու խոյակ,
Դու՝ հանգրվան, կանչող փարոս,
Դու հայկական գերբ ու դրոշ,
Խոսուն վկա կոտորածի
Ու վճիտ աչք ցամքած լացի,
Արդարության ահեղ ատյան,
Սրի պատյան,
Սիրո մատյան-
Միշտ հի՛ն ու նո՛ր իմ Հայաստան:

Էդուարդ Մուշեղի ՂԱԶԱՐՅԱՆ

Որակյալ կրթության գլխավոր դերակատարը ուսուցիչն է

Շնորհավորում ենք Էդուարդ Մուշեղի ՂԱԶԱՐՅԱՆԻՆ՝ ծննդյան օրվա առթիվ: Մաղթում ենք շարունակական հաջողություններ գիտակրթական ասպարեզում և վաստակին արժանի գնահատանք:

«Երկար տարիներ զբաղվել եմ պրոֆեսիոնալ ֆուտբոլով: Դատրաստվում էի բարձրագույն կրթություն ստանալ սպորտի ուղղությամբ: Ընդունելության քննություններից միայն մեկ օր առաջ իմացա, որ հայրս թղթերս տեղափոխել է ԵՊՀ-ի Ֆիզիկայի ֆակուլտետ: Այդպես ես դարձա Մայր բուհի, ապա Մոսկվայի պետական համալսարանի ուսանող».

Էդուարդ ՂԱԶԱՐՅԱՆ

Ականավոր ֆիզիկոս, Հայաստանում նանոֆիզիկայի հիմնադիր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդուարդ Ղազարյանն օրերս նշեց ծննդյան 80-ամյակը: Գիտական գործունեության շուրջ վեց տասնամյակների ընթացքում նա զբաղեցրել է տարբեր պաշտոններ՝ Կրթության և գիտության նախարար, Մանկավարժական համալսարանի ռեկտոր, ԳԱԱ փոխնախագահ և այլն. կրթության և գիտության հմուտ կազմակերպիչը, պետական և հասարակական գործիչն իր գործունեության բոլոր ոլորտներում կարևորել է կրթության դերը, գիտության զարգացումը, բարձրացրել է խնդրահարույց հարցեր, հետամուտ եղել դրանց իրագործմանը: Այսօր էլ անվանի գիտնականն անհանգստացած է՝ կրթության և գիտության ոլորտում շատ բան ենք կորցրել:

«Խորհրդային կրթական համակարգն ուներ բացահայտ ընդգծված երկու առավելություն՝ հիմնարարությունն ու հանրագիտայնությունը: Դա տալիս էր հիմնարար գիտելիքներ՝ անկախ նրանից, թե ինչ մասնագետ էր դառնալու աշակերտը: Իմ գործունեության տարբեր շրջաններում մշտապես խորհուրդ եմ տվել պահպանել այս երկու կարևոր առավելությունները: Ցավոք՝ չպահպանվեց. դա մեր կարևոր կորուստն էր»,-մեզ հետ զրույցում նշում է Էդուարդ Ղազարյանն ու թվարկում այն խնդիրները, որոնք անկախությունից հետո ավելի խորացրին կրթական համակարգի խնդիրները:

Որպես կրթության փորձագետ՝ նա բազմիցս ներկայացրել է իր դիտարկումներն իրականացվող բարեփոխումների համատեքստում: Նկատում է՝ խնդիրներից մեկն անցումն էր 12-ամյա կրթության. նախարար լինելու ընթացքում Էդուարդ Ղազարյանն առաջարկում էր անցնել 11-ամյա կրթությանն ու թեթևացնել միջին դպրոցի ծանրաբեռնվածությունը. «Նախկին 18 ժամի փոխարեն ուսուցիչն այսօր շաբաթը 22 ժամ է պարապում. օրական 4-5 ժամ պարապող ուսուցիչը սպառվում է, էներգիա չի մնում վերապատրաստման, նոր գրականության ընթերցման, կարողությունների զարգացման համար: Նա իր հիմնական առաքելությունը չի հասցնում: Դասարանների խտությունը ևս մեծացավ. երկու քայլն էլ եղավ՝ ի վնաս կրթության որակի»,-հավելում է Էդուարդ Ղազարյանը:

Որակյալ շենքային պայմաններ, նյութատեխնիկական բազա, ուսումնական լավ ծրագիր և լավագույն ուսուցիչ. ըստ ակադեմիկոս Ղազարյանի՝ սա է որակյալ կրթական համակարգ ունենալու գործիքակազմը: Նկատում է՝ շենքային պայմանների բարելավման, բնագիտական առարկաների գծով ուսումնական լաբորատորիաներով դպրոցները հագեցնելու տեսանկյունից դրական տեղաշարժ, կարծես թե, կա, սակայն կարևոր է, որ դպրոցաշինությունը դառնա հանրային պատասխանատվություն:

«Որակյալ կրթության գլխավոր դերակատարը ուսուցիչն է: Նա պետք է համապատասխանի երեք կարևոր չափանիշի՝ դպրոցական ծրագրի շրջանակներում կատարյալ տիրապետի իր առարկային, ապա մեթոդական հմտություններին և տեխնոլոգիաների կիրառմամբ նյութն աշակերտներին մատուցի մատչելի, բայց գիտական մակարդակում»,-նշում է Էդուարդ Ղազարյանն ու հավելում ուսուցչի երրորդ և ամենակարևոր չափանիշը՝ տիրապետումը մայրենի լեզվին՝ անկախ նրանից, թե ինչ է դասավանդում ուսուցիչը. հայերենի ուսուցիչը միայնակ չի կարող երեխային գրագետ դարձնել:

Էդուարդ Ղազարյանը նաև վաստակաշատ մանկավարժ է, գիտական գործունեությանը զուգահեռ, դասավանդել է հանրապետության մի շարք դպրոցներում, ունեցել ֆիզիկայի բնագավառում օլիմպիական հաջողություններ վաստակած աշակերտ: Սեփական փորձով գիտի՝ առանց նվիրումի, լավ ուսուցիչ չես կարող լինել: Ափսոսանքով է նկատում՝ արժեքային դաշտն ենք կորցրել և գլուխ է բարձրացրել մի բան, որ կոչվում է «սպառողական հոգեբանություն»:

«Գիտելիքն ու իմացությունը հայ ընտանիքներում մշտապես ազգային արժեք են եղել: Երանելի էին անցած դարի 60-ականները, երբ ուսուցիչն անառարկելի հեղինակություն էր, նա հպարտ կեցվածքով մտնում էր դպրոց, դասախոսը՝ բուհ, գիտնականը՝ ինստիտուտ: Դրան նպաստում էր առաջին հերթին պետության վերաբերմունքը, երբ երկրում ամենաբարձր աշխատավարձ ստանում էր դոկտոր, պրոֆեսորը, ոչ թե նախարարը»,-նշում է անվանի գիտնականն ու թվարկում նաև այն գրական ու մշակութային ստեղծագործությունները, որոնք մեծարում էին գիտնականին ու նրա գործունեությունը:

Նրա կարծիքով՝ ներկա իրադրության պայմաններում, երբ ծնողը մեղադրում է ուսուցչին, ուսուցիչը ընտանիքին, և մանկավարժը հեղինակազրկվել է, մեկ նախարարությունը չի կարող լուծել խնդիրը. ազգովի պետք է վերականգնել այն մթնոլորտը, որ հայ ընտանիքներում նորից գիտելիքն ու իմացությունը դառնան նույնքան կարևոր:

«Կրթությունը միայն ինտելեկտ չէ: Այն նաև բնավորություն պետք է լինի, հատկապես այսօր՝ մեր երկրի անվտանգության պայմաններում պետք է յուրաքանչյուրը հստակ գիտակցի, որ ինքն է այս երկրի տերն ու սահմանների պահապանը: Արցախյան 1-ին պատերազմում հաղթեց հայ ուսուցիչը»,-վստահեցնում է աշակերտների և ուսանողների տարբեր սերունդներ կրթած մանկավարժ-գիտնականը:

Էդուարդ Ղազարյանն այսօր էլ շարունակում է իր ակտիվ գործունեությունը, բարձրաձայնում կրթության և գիտության ոլորտների խնդրահարույց կողմերի մասին: Անհանգստացած է՝ տեխնոլոգիաների սրընթաց զարգացման ժամանակաշրջանում, երբ նոր գիտական ուղղություններ ու մասնագիտություններ են առաջանում, երիտասարդ որակյալ գիտնականներ են անհրաժեշտ. «Քիմիան, ֆիզիկան և կենսաբանությունը բարձր տեխնոլոգիական ոլորտի զարգացման հիմնական ուղղություններն են ապահովում: Սկզիբը դրվում է դպրոցում, այնինչ այդ առարկաների գծով ուսուցիչների պակաս արդեն ունենք: Այս հարցի համար ոչ սատնդարտ լուծումներ են պետք»,-նշում է Էդուարդ Ղազարյանն ու ևս մեկ անգամ ընդգծում՝ այս պահին երկրի համար կարևորագույնը պետք է լինեն մանկավարժական և ինժեներական ուղղությունները:

Գիտության բարձունքները նվաճած գիտնականը տարիների հեռվից վերանայում է ֆուտբոլի և ֆիզիկայի միջև կատարած ընտրությունն ու առանց ափսոսանքի վստահեցնում. «Միշտ էլ ինչ-որ կիսատ թողած բանի համար ափսոսում ես, բայց, մեծ հաշվով, ճիշտ քայլ էր, քանի որ սպորտը երիտասարդ տարիքի համար է: Չէ՞ որ կյանքը շարունակվում է, և ցանկալի է, որ ընտրածդ մասնագիտությունը քեզ ուղեկցի մինչև կյանքի վերջը»:

Էդուարդ Ղազարյանն ասվածը վերահաստատում իր գործունեությամբ: Մինչ օրս նա և՛ կրթության, և՛ գիտության մեջ է. դասավանդում է երկու բուհում, վերապատրաստում ուսուցիչներին, հիմնադիր-խմբագիր է գիտական երեք ամսագրի՝ «Բնագետ», «Գիտության աշխարհում» և «Դպրոցականի գրադարանի մատենաշար»՝ բնագիտական առարկաների գծով:

Պրոֆեսորը հավատում է պատահականություններին և լիահույս է, որ մի օր այդ ամսագրերում երեխան մի բան կկարդա, կոգևորվի և կընտրի հենց այդ ուղին:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

BTBF վերապատրաստման դասընթացների արդյունքների նախնական ամփոփում

BTBF ծրագրի հաշվետվողականության շրջանակներում Շվեյցարիայի փորձագետների խմբի՝ Կորիննա Բոռեռի, Վիլտրուդի Վայդինգերի և Ռոլֆի Գոլլոբի նախաձեռնությամբ տեղի ունեցավ առցանց հանդիպում:

Առցանց հանդիպման նպատակն էր քննության առնել տարեվերջյան աշխատանքային պլանի շրջանակներում առկա ձեռքբերումները, մասնավորապես՝ Հայաստանի փորձագետների խմբի՝ Մարիաննա Հարությունյանի, Քրիստինե Տանաջյանի, Սաթեն Սարգսյանի և Տիգրան Միքայելյանի կողմից կազմակերպված դասընթացների շարքը դպրոցների ուսուցչական անձնակազմի և տնօրենների համար:

Մասնակիցների կողմից կրկնվող և ընդգծված առաջնահերթությունները վերաբերում էին առաջադեմ մեթոդաբանության տարածմանը, իրազեկության բարձրացմանը և առաջադեմ կառավարման ոլորտներին: Առցանց հանդիպման մասնակիցները վերահաստատեցին նման դասընթացների կարևորությունը ոչ միայն մասնագիտական զարգացման և ինքնագնահատման, այլև համայնքի շահերն ու կարիքները բավարարելու տեսանկյունից, ինչը կնպաստի ժողովրդավարական հասարակության ձևավորմանը և ազգային քաղաքականության մշակման գործընթացներին:

Դասընթացների մասնակիցների կողմից տրամադրված արձագանքների նախնական վերլուծությունը փաստում է BTBF նախագծի, ուսումնական նյութերի (ձեռնարկների) և Հայաստանի կրթական ոլորտում Շվեյցարիայի փորձագետների խմբի կողմից հայտարարված և տարածված սկզբունքների հնարավոր դրական ազդեցության մասին:

Առցանց հանդիպմանը պայմանավորվածություն ձեռք բերվեց մինչև հունվարի վերջ մեթոդական և բովանդակային ամփոփումների և անցկացված դասընթացների արդյունքների ճանաչման հետ կապված մի շարք տեխնիկական հարցերի շուրջ:

Բացվեց քաղաքացիական կրթության կենտրոն

«ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպությունը Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հետ համատեղ բուհի Բանասիրական ֆակուլտետի 312 լսարանում պաշտոնապես ազդարարեց «Քաղաքացիական կրթության կենտրոն»-ի (ՔԿԿ) աշխատանքների մեկնարկը:

ՀՊՄՀ-ում բացված Քաղաքացիական կրթության կենտրոնը կգործի ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» հնգամյա ծրագրի նյութական և մեթոդական օժանդակությամբ:

Կենտրոնի մեկնարկը համալսարանում ողջունեց բուհի ռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը:

Ռեկտորը ողջունեց նախաձեռնությունը՝ փաստելով, որ Քաղաքացիական կրթության մասնակցության գաղափարախոսության ներքո հնարավորություն է ստեղծվել ունենալու մի հրաշալի միջավայր, որը ընձեռելու է ուսանողի կրթության, գիտության, ժամանցի, քաղաքացիական արժեքների զարգացման հնարավորություն:

Ս. Գևորգյանը կարևորեց մեր օրերում քաղաքացիական արժեքանությունը, որը դրսևորվում է հատկապես երիտասարդների մոտ, որոնք վաղվա օրվա, երկրի վաղվա գործունեության ուղղորդման վեկտորի նախաձեռնողն են լինելու:

Ամփոփելով՝ ռեկտորն ընդգծեց, որ կենտրոնը նաև հիմք կհանդիսանա երիտասարդության այն արժեքանության զարգացման համար, որը կպայմանավորի վաղվա՝ ապագայի մեր լավ օրը:

Այնուհետև կենտրոնի կողմից լսարանի բացման մասին խոսեց «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ»-ի հայկական մասնաճյուղի տնօրեն Մարիամ Մարտիրոսյանը: Նա փաստեց, որ ծրագրի հիմնական առաքելությունը մեր երկրում հասարակագիտության ֆորմալ և ոչ ֆորմալ քաղաքացիական կրթության որակը բարելավել, ինչպես նաև խթանել երիտասարդների հանրային մասնակցությունը մեր երկրում ժողովրդավարական գործընթացների կայացմանը:

Ելույթ ունեցողն ընդգծեց, որ երկրի քաղաքացիների բարեկեցությունը կախված է քաղաքացիների որակից՝ երիտասարդներին համարելով երկրի զարգացման գլխավոր առանցքը:

Միջոցառմանը հրավիրված էին ԱՄՆ ՄՋԳ-ի, ԿԳՄՍՆ-ի ներկայացուցիչներ, բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ և ուսանողներ:

Ի դեպ, կենտրոնը կհամակարգեն բուհի երկու ուսանողուհի, որոնց ուսման վարձավճարները կփոխհատուցի վերոհիշյալ կազմակերպությունը:

Լսարանը կահավորվեց համակարգչային տեխնիկայով և գրականությամբ, որը կօգնի թե՛ համալսարանի ուսանողներին, թե՛ համայնքի երիտասարդներին՝ անվճար օգտվել կենտրոնի ռեսուրսներից և կազմակերպել տարատեսակ հանդիպումներ, քննարկել հարցեր:

ՀՊՄՀ ավագ դպրոց

Իմ ավագ դպրոցը

Երբ ես առաջին անգամ մտա Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հենակետային վարժարան-ավագ դպրոց, ուշադրությունս գրավեց տարածքի ընդարձակությունը, լուսավորությունն ու վարժարանի հյուրընկալ միջավայրը: Անկեղծ ասած, թեև ավագ եղբայրս նույնպես սովորում էր այստեղ և հաճախ էր հիացմունքով պատմում դպրոցի մասին, ես այդպիսի տպավորություն չէի ակնկալում:

Մենք մտանք դասարան, և ինձ թվաց՝ ես շատ վաղուց եմ սովորում այս դպրոցում, մեծացել եմ այս կամարների ներքո, բոլորն ինձ ծանոթ են ու հարազատ:

Առաջին օրվանից վարժարանը դարձավ շատ հարազատ, մտերմիկ ու ապահով կրթական օջախ: Ուսուցիչները մեզ ընդունեցին այնպիսի ջերմությամբ, հարգանքով ու վստահությամբ, որ մենք միանգամից հասունացանք այդ վստահությունն ու հարգանքը չափազանց պարտավորեցնող էին...

Այսօր, երբ հետադարձ հայացքով անդրադառնում եմ դպրոցում անցկացրած երեք տարիների հիշողություններին, նոր եմ գիտակցում, թե որքան ազատ էինք մեր գործունեության ձևերն ընտրելիսգ յուրաքանչյուրս ուներ իր ճանաչողական հետաքրքրությունները, արտադպրոցական կյանքն ու ազատ առօրյան...

Այս ամենը հետաքրքրում էր նաև մեր ուսուցիչներին, տնօրինությանը, ավելին, նրանք ապրում էին մեր հետաքրքրություններով, մեր ձեռքբերումներով, մեր ձախողումներով ու արժեքներով:

Շուտով կավարտեմ ավագ դպրոցը, ափսոսանքով կբաժանվեմ իմ ուսուցիչներից ու ընկերներից... Ես զգում եմ իմ անձնային ձեռքբերումների ընդարձակ ծավալը, իմ արժեհամակարգի ձևավորման ակնհայտ թռիչքը: Դրանք առաջին հերթին պայմանավորված են մեր շուրջն առկա մանկավարժական բարենպաստ պայմաններով, որոնք անառարկելիորեն ոչ միայն նպաստեցին իմ և համադասարանցիներիս զարգացմանը, այլև մեզ համար ապահովեցին երջանիկ պատանեկություն:

Դասերիս զուգահեռ մի խումբ վաստակաշատ դերասանների և պատանիների հետ մասնակցում եմ թատերական ստուդիայի դասընթացների, թատերական ներկայացումների, միաժամանակ նկարահանվում եմ «Դեպի ճամբար» մանկապատանեկան բազմասերիանոց կինոնակարում: Պատրաստվում եմ ընդունվել Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ:

Գրիգորի ԽԱՆԳԵԼԴՅԱՆ
ՀՊՄՀ ավագ դպրոց-վարժարանի 12-րդ դասարանի սովորող

ԶԱՀՐԱՏ

ԿԱՂԱՆԴԻ ԾԱՌ ՄԸ

Կաղանդի ծառ մը շտկելու համար
Երկու բան պէտք է
Նախ ծառ մը – յետոյ զարդեր
ծառին վրայ
Կաղանդի ծառ մը շտկելու համար
Երեք բան պէտք է
– Ծառէն զարդէն զատ
Հաւատքը գալիք աղուոր օրերու
Կաղանդի ծառ մը շտկելու համար
Մէկ բան կը բաւէ–ոչ ծառ ոչ ալ զարդ –
Ատիկա խիճերն ադամանդ կարծող
Միամիտ հոգւոյս բարի խաբկանքն է
Կաղանդի ծառ մը շտկելու համար
Արդէն պատրանքը լրիւ կը բաւէ
Բարի տարի չեզ եւ բարի պատրանք:

Մանկավարժական գիտությունների դոկտոր, Մոսկվայի մանկավարժական պետական համալսարանի պրոֆեսոր, Լևոն Աթանասյանի անվան երկրաչափության ամբիոնի վարիչ Սերգեյ Լևոնի Աթանասյանը 1971 թ. ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մեխմաթ բաժինը: Մանկավարժական բուհերում ավելի քան կեսդարյա դասավանդման փորձ ունի:

Գիտական հետաքրքրությունների շրջանակն է երկրաչաձությունը, բարձրագույն դպրոցի երկրաչափության դասավանդման մեթոդիկան:

Նա Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի վաղեմի բարեկամներից է: Երկու բուհերի միջև համագործակցության պայմանագրի շրջանակներում բազմիցս այցելել է Մանկավարժական համալսարան. արդյունավետ համագործակցության շնորհիվ մի շարք համատեղ ծրագրեր են իրականացվել:

Այժմ պրոֆեսոր Սերգեյ Աթանասյանը սերտ կապերի մեջ է բուհի Մաթեմատիկայի, Ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հետ: Նրա այցելությունները ամբիոնի դասախոսների հետ նոր գաղափարների, նոր նախաձեռնությունների են ծնունդ տալիս, որոնք ավարտվում են համատեղ գիտաժողովների անցկացմամբ, տարբեր ձեռնարկների ու գիտական հոդվածների հրապարակմամբ:

Պրոֆեսոր Սերգեյ Աթանասյանի հերթական այցի ընթացքում զրուցեցինք նրա հետ, խոսեցինք ամբիոնի դասախոսների հետ առաջիկա համատեղ ծրագրերի, նրա հայկական արմատների, մաթեմատիկական կրթության և այլ հարցերի շուրջ:

ինստիտուտ: Սկսվել է պատերազմը և նա մեկնել է բանակ՝ ծառայության, կապիտանի կոչում ստացել, ապա 1916 թ. Ռումինիայում մասնակցել Ավստրո-Վենգրիայի, գերմանացիների դեմ պատերազմին:

1918 թվականին պապս դաշնակների կողմից կռվել է թուրքերի դեմ: Մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին՝ որպես հրետանային գումարտակի հրամանատար:

ԿՕ՝ ղեկավարելու բարձրագույն կրթության բաժինը: Փարիզից վերադառնալուց հետո մինչև կյանքի վերջը նա զբաղվեց գիտությամբ:

Հայրս մեծ ներդրում է ունեցել ԽՍՀՄ-ի և Ռուսաստանի մաթեմատիկական կրթության բարեփոխումների գործում, մեծ ճանաչում ուներ գիտական հետազոտությունների, գիտական ու գիտամեթոդական ձեռնարկների հրապարակման ասպարեզում: Հատկապես հայտնի է նրա երկրաչափության երկհատոր ուսումնական ձեռնարկը՝ պրոֆեսոր Վ. Կ. Բազիլևի հետ համահեղինակությամբ: Նաև բազմաթիվ գիտական բարձրագույն խորհուրդների անդամ էր, իր վաստակի համար պարգևատրվել է տարբեր մեդալներով:

Մինչև օրս նաև Հայաստանի հանրակրթական դպրոցներում կիրառում են նրա գրած դասագրքերը:

-Ինչպե՞ս կբնութագրեք այսօրվա մաթեմատիկական կրթության ընթացքը:

-Ես տեսնում եմ, որ այն անընդհատ հետընթաց է ապրում, ինչը, ցավոք, վատ է: Աշխարհը շատ է փոխվել: Դպրոցների սովորողների և շրջանավարտների մասին խոսելիս պետք է ասել, որ նրանք չեն կարողանում կարդալ դասագիրքը: Իմ ուսանողներից մեկն ասաց, որ դպրոցում մաթեմատիկայի դասագիրք չեն բացում, բավարարվում են խնդիրներ ու վարժություններ լուծելով: Մաթեմատիկական դպրոցական կրթությունը կտրուկ անկում է ապրում: Ոչ մի կերպ չեն կարողանում հասկանալ՝ ինչպես ճիշտ օգտագործել «գաջեթները» մաթեմատիկական կրթության համար, որը լուրջ ազդեցություն ունի նաև բուհում մաթեմատիկայի դասավանդման վրա:

Գեղեցիկ երկիր, գեղեցիկ մարդիկ, գեղեցկագույն լեզու

-Պարոն Աթանասյան, Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հետ Ձեր կապերը տարիների վաղեմություն ունեն: Ինչի՞ց սկսվեց Ձեր համագործակցությունը մեր բուհի հետ:

-Այն սկսվեց 2005 թվականին, երբ Մոսկվայից Լուժկովի ղեկավարությամբ կառավարական պատվիրակություն եկավ Երևան: Ինձ ընդգրկել էին այդ պատվիրակության կազմում որպես Մոսկվայի կրթության դեպարտամենտի ներկայացուցիչ, Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարանի պրոռեկտոր:

Ինձ դիմավորեց Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի այն ժամանակվա ռեկտոր Արտուշ Ղուկասյանը: Այստեղից էլ սկսվեց մեր համագործակցությունը:

-Ինչպե՞ս զարգացան հետագա հարաբերությունները, և Ձեր համագործակցության արդյունքում ոլորտում ի՞նչ բարեփոխումներ եղան:

-Երկար զրուցեցինք, ինձ ծանոթացրին համալսարանի հետ, որից հետո սկսվեց մեր սերտ համագործակցությունը Մանկավարժական համալսարանի հետ. մի քանի համատեղ գիտական ժողովածուներ ունեցանք, գիտական պատվիրակություններ փոխանակեցինք, գիտաժողներ Մանկավարժական համալսարանում, ապա մեզ մոտ՝ Մոսկվայում, այնուհետև Մանկավարժական համալսարանի պատվիրակությունը մեր բուհի մասնաճյուղերից մեկի կոնֆերանսին հրավիրվեց...

Մենք շատ արդյունավետ աշխատեցինք: Մեր բուհերի միջև համագործակցության պայմանագիր կա, որի շրջանակներում էլ գործում ենք:

-Այժմ Դուք համագործակցում եք ՀՊՄՀ Մաթեմատիկայի, Ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հետ:

-Հիմա ես ինստիտուտի մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոնի թվային կրթության պրոֆեսոր եմ: Ահա ինչու այժմ ես համակարգում եմ ՀՊՄՀ մաթեմատիկայի դասախոսների հետ կապերը:

-Ի՞նչ կուզենայիք ասել Ձեր հայկական արմատների մասին:

-2021 թվականին իմ հոր՝ Լևոն Աթանասյանի ծննդյան 100-ամյակը լրացավ: Մեծ կոնֆերանս կայացավ, որին Մանկավարժական համալսարանից մասնակցեց և զեկուցումով հանդես եկավ ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Հարությունյանը: Համագործակցության կապերը վերականգնվեցին:

Արմատների մասին երկար կարող եմ խոսել: Հորական կողմի նախապապս Երևանում զբաղվել է գինու առևտրով: Ինչպես բոլոր հայկական ընտանիքներում, նա էլ որոշել է կրթության տալ իր բոլոր երեխաներին: Նրա բոլոր զավակներն ավարտել են Երևանի գիմնազիան: Անդրանիկ տղան՝ Սերգեյը, 1912-1913 թվականներին մեկնել է Սանկտ Պետերբուրգ, ընդունվել Ժողտնտեսության

Վերջերս տղայիս և թոռիս հետ գնացել էինք Սարդարապատի հուշահամալիրի թանգարան, որտեղ մի ամբողջ սրահ այդ պատերազմին է նվիրված: Լուսանկարների մեջ տղաս տեսավ նաև պապիս լուսանկարը՝ Սերգեյ Անդրեևիչ Աթանասյան: Այդ մասին մենք ասացինք էքսկուրսավարին, ով շատ զարմացավ և խնդրեց պատմել այդ մասին:

Պապս եղել է դաշնակցական բանակի սպա: Կարմիր բանակի մուտքի հետ նա հեռացել է, գնացել սովորելու Սանկտ Պետերբուրգում: 1921-ին ծնվել է հայրս, 1923-1925-ին՝ երկու քույրերը:

Պապս վերադարձել է, երբ Երևանում ձևավորվում էին ինստիտուտները, ձևավորվում էր բարձրագույն կրթության համակարգը: Որքան տեղյակ եմ՝ նա ակտիվ մասնակցություն է ցուցաբերել Գյուղինստիտուտի ստեղծմանը, աշխատել է այնտեղ որպես մաթեմատիկայի ամբիոնի վարիչ:

Իսկ 1938 թվականին Լենինգրադում նա գնդակահարվել է որպես գվարդիայի սպա:

1939-ին հայրս՝ Լևոն Սերգեյի Աթանասյանը ստացել է ատեստատը, անմիջապես գնացք նստել և մեկնել Մոսկվա՝ բարեկամի մոտ: Պատմել են, որ մի քանի օրից նրան փնտրել են:

Շատ է ցանկացել զբաղվել մաթեմատիկայով, գործերը տվել է, բայց նրան չեն վերցրել՝ որպես բռնաճնշման (ռեպրեսիայի) ենթարկվածի տղայի. հորս թույլ են տվել ընդունվել միայն Ավտոճանապարհային ինստիտուտ, զուգահեռ ընդունվել է նաև Կոնսերվատորիա, որովհետև հրաշալի նվագում էր դաշնամուր:

Ուսման ընթացքում նկատելով մաթեմատիկայի հանդեպ նրա ցուցաբերած կարողությունները՝ նրան տեղափոխել են Մոսկվայի Կարլ Լիբկնեխտի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի 3-րդ կուրս, որտեղ սովորում էր նաև ապագա մայրս. նա Բելառուսիայից էր: Նա գերազանցության մեդալով էր ավարտել դպրոցը: Տարիներ հետո նրանց ուղիները նորից խաչվել են, որն ավարտվել է ամուսնությամբ:

1943 թվականին նա Օմսկի ռազմական ուսումնարանի կուրսանտ էր, այնուհետև՝ Բարնաուլի ռազմական ուսումնարանում դասակի հրամանատար, որտեղ պատրաստում էին սպաներ ռազմաճակատի համար: Հավելենք, որ մաթեմատիկական կարողությունների համար հետագայում նրան պահել են թիկունքում:

1946-ին արդեն Մոսկվայի մանկավարժական պետական ինստիտուտի ասպիրանտ էր, աշխատանք ինստիտուտի երկրաչափության ամբիոնում, որտեղ անցավ ասիստենտից մինչև պրոֆեսոր ճանապարհը: Այնուհետև՝ ամբիոնի վարիչ, Մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան, նույն ինստիտուտի պրոռեկտոր՝ ուսումնական աշխատանքների գծով:

1969 թ. հայրս աշխատանքի է հրավիրվել ՅՈՒՆԵՍԿՕ՝ ղեկավարելու բարձրագույն կրթության բաժինը: Փարիզից վերադառնալուց հետո մինչև կյանքի վերջը նա զբաղվեց գիտությամբ:

Հայրս մեծ ներդրում է ունեցել ԽՍՀՄ-ի և Ռուսաստանի մաթեմատիկական կրթության բարեփոխումների գործում, մեծ ճանաչում ուներ գիտական հետազոտությունների, գիտական ու գիտամեթոդական ձեռնարկների հրապարակման ասպարեզում: Հատկապես հայտնի է նրա երկրաչափության երկհատոր ուսումնական ձեռնարկը՝ պրոֆեսոր Վ. Կ. Բազիլևի հետ համահեղինակությամբ: Նաև բազմաթիվ գիտական բարձրագույն խորհուրդների անդամ էր, իր վաստակի համար պարգևատրվել է տարբեր մեդալներով:

Մինչև օրս նաև Հայաստանի հանրակրթական դպրոցներում կիրառում են նրա գրած դասագրքերը:

-Ինչպե՞ս կբնութագրեք այսօրվա մաթեմատիկական կրթության ընթացքը:

-Ես տեսնում եմ, որ այն անընդհատ հետընթաց է ապրում, ինչը, ցավոք, վատ է: Աշխարհը շատ է փոխվել: Դպրոցների սովորողների և շրջանավարտների մասին խոսելիս պետք է ասել, որ նրանք չեն կարողանում կարդալ դասագիրքը: Իմ ուսանողներից մեկն ասաց, որ դպրոցում մաթեմատիկայի դասագիրք չեն բացում, բավարարվում են խնդիրներ ու վարժություններ լուծելով: Մաթեմատիկական դպրոցական կրթությունը կտրուկ անկում է ապրում: Ոչ մի կերպ չեն կարողանում հասկանալ՝ ինչպես ճիշտ օգտագործել «գաջեթները» մաթեմատիկական կրթության համար, որը լուրջ ազդեցություն ունի նաև բուհում մաթեմատիկայի դասավանդման վրա:

Իսկ 9-10-րդ դասարաններում ոչ ոք չի զբաղվում մաթեմատիկայով, բոլորն զբաղվում են միայն վարժություն լուծելով: Մանկավարժական բուհերի մաթեմատիկական բաժիններում էլ վիճակը նույնն է:

Ես ասում եմ՝ եթե մարդը կարողանում է մտածել, մաթեմատիկա գիտի, նորմալ սովորել է, վարժություններ լուծել, ինչպես պետք է, նա կարող է հանգիստ հավաքել պահանջվող միավորները՝ աշխատանքի ընդունվելու համար:

-Ինչպե՞ս եք գնահատում Ձեր մասնագիտական առաջընթացը:

-Ես կարծում եմ, որ իմ առաջընթացը հասել է բարձրագույնին՝ ես մանկավարժական գիտությունների դոկտոր եմ, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, գրել եմ դասագրքեր, խնդրագրքեր, հոդվածներ: Իմ հետաքրքրությունների շրջանակը երկրաչափության դասավանդման մեթոդիկան է: Երկար տարիներ պատրաստում եմ դպրոցների երկրաչափության դասավանդման ուսուցիչների: Հատկապես դժվար է երկրաչափության դասավանդման մեթոդիկան հենց դպրոցում, որը կապված է բարձրագույն երկրաչափության հետ:

-Տարբեր կարծիքներ եմ լսել մասնագետների կողմից՝ մեկն է ասում է՝ ֆիզմաթ գիտությունների թագուհին մաթեմատիկան է, մյուսը՝ ֆիզիկան:

-Իհարկե՛ մաթեմատիկան է: Ֆիզիկան ֆիզիկա չէր լինի, եթե չլիներ մաթեմատիկան: Ես ավելի հարգանքով եմ վերաբերվում մաթեմատիկային:

-Ո՞րն է Ձեր հաջողության գաղտնիքը մաթեմատիկայի ուսուցչի պատրաստման գործում:

-Ես կարծում եմ մաթեմատիկայի ուսուցչի պատրաստման մեջ գլխավորը ուսուցչի մեջ մաթեմատիկական առաջադրանքների լուծման հանդեպ սիրո ձևավորումն է՝ որպեսզի հատկապես մաթեմատիկայի ուսուցիչը աշակերտներին սովորեցնի մտածել և լուծել առաջադրանքները, սովորեցնի մաթեմատիկական գրագիտություն, ոչ թե անգիր անել: Սա հետաքրքիր առարկա է. դու սովորում ես մտածել, քննադատաբար վերաբերվել ամեն ինչին՝ քո դատողություններին, քո որոշումներին, առարկան պետք է զարգացնի քննադատական մտածողությունը:

-Իսկ ո՞րն է ձեր այսօրվա այցի նպատակը:

-Հունվարի վերջին մենք գիտաժողով ենք անցկացնելու մոսկովյան մեր բուհում, որին առցանց մասնակցելու են նաև ձեր համալսարանի մեր գործընկերները: Որոշ հարցերի շուրջ պետք է պայմանավորվենք:

-Ի՞նչ կասեք Հայաստանի և հայերի մասին: Ի՞նչ տպավորություններ եք տանում Ձեր շփումներից:

-Նրանք շատ լավն են: Գեղեցիկ երկիր, գեղեցիկ մարդիկ, գեղեցկագույն լեզու: Շատ գեղեցիկ լեզու:

Զրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

Արցախը յոր օնինք, նորից քինանք ապրինք

Մեր հարցազրույցը Ստեփանակերտի Արցախի պետական համալսարանի ուսանողուհի Մարիամ Մկրտումյանի հետ:

-Ներկայացեք, խնդրեմ:

-Ես Մկրտումյան Մարիամն եմ Արցախի Ստեփանակերտ քաղաքից: Սովորել եմ Արցախի պետական համալսարանի Պատմության ֆակուլտետի պատմության բաժնում: 2-րդ կուրսն ավարտելուց հետո, երբ փոխադրվեցի 3-րդ կուրս, չհասցրեցի այն մինչև վերջ, երբ հունի մեջ մտանք, մեկ շաբաթ անց սկսվեց պատերազմը: Սեպտեմբերի 19-ին, երբ սկսվեց պատերազմը, մենք դասի էինք, եկանք տուն, և հետո իրավիճակը ոնց թելադրեց, նրանով էլ առաջնորդվեցինք: Եկանք Հայաստան:

-Հայաստան գալուց հետո դիմեցիք Մանկավարժակա՞ն:

-Ոչ, դիմեցինք ԵՊՀ, բայց հետո տեղափոխվեցինք Մանկավարժական: Այս բուհի կառուցվածքն ավելի նման է մերին, ամեն ինչ համապատասխանում է Արցախի պետական համալսարանին, հետևաբար՝ ավելի հարազատ է մեզ: Հիմա մի քանի կուրսեցիներով սովորում ենք ՀՊՄՀ պատմության բաժնում և փորձում ենք հարմարվել:

-Շրջափակման ընթացքում ինչպե՞ս էիք կարողանում շարունակել ուսումնառությունը:

-Մեր կուրսը բաղկացած էր 5 հոգուց, կուրսեցիներս հիմնականում շրջաններից էին, օրինակ Դիանան Ասկերանից էր և վառելիքի բացակայության պատճառով չէր կարողանում գալ դասի, հիմնականում 2-3 հոգով էինք դասերին մասնակցում:

-Հասցնո՞ւմ էիք դասերին պատրաստվել:

-Ոչ, չէինք հասցնում, որովհետև գիշերը գնում էինք հացի հերթի գրանցվելու, առավոտյան գնում էինք հաց ստանալու, մինչև գալիս էինք տուն՝ արդեն դասի գնալու ժամանակն էր:

-Ո՞րն է քո ծննդավայրը:

- Ծնվել եմ Ստեփանակերտում, ընտանիքով ապրում էինք այնտեղ, բայց արմատներով՝ հայրս Մարտակերտի շրջանի Ծմակահող գյուղից է, մայրս՝ Ճանկաթաղ գյուղից:

-Մարիամ, բոլորդ ծանր զգացողություններ եք ունեցել Արցախը լքելիս, ավելի ծանր՝ Հակարիի կամուրջն անցնելիս: Ի՞նչ փոխվեց, երբ Հայաստան մտաք, երբ ձեզ դիմավորեցին Գորիսում:

-Պատերազմի ընթացքում, երբ դեռ չգիտեինք, որ թողնելու ենք Արցախը, շատ էինք ուզում գալ Հայաստան: Երեխաները վախենում էին, որովհետև ադրբեջանցիներն արդեն հասել էին հրապարակ և իրենց դրոշն էին ուզում բարձրացնել… Իսկ երբ լուրեր տարածվեցին, որ ճանապարհը բաց է, ժամանակ տվեցին մեկ շաբաթում հավաքվել ու դուրս գալ, արդեն չէինք ուզում դուրս գալ… Դժվար է՝ իմանալ, որ այսինչ օրը թողնելու ես տունդ, հայրենիքդ և հեռանաս…

Մենք ապրում էինք ինը հարկանի շենքի վեցերորդ հարկում, երկու օր նկուղում էինք: Սեպտեմբերի 26-ի երեկոյան դուրս եկանք Ստեփանակերտից՝ 9-12 ժամ կանգնելով ճանապարհին, ազերիների կողքին, իսկ երբ հասանք Հակարիի կամրջին, վախն ավելի սաստկացավ: Գիշերվա ժամը չորսն էր, երբ մեր անձնագրերը ստուգեցին: Իսկ երբ հասանք Գորիս, գորիսցիների՝ մեր հանդեպ ջերմ վերաբերմունքը մի տեսակ հույս էր ներշնչում, որ ամեն ինչ լավ է լինելու:

Տեղեկությունները, որ հասնում էին մեզ, ավելի էին վախեցնում. ասում էին, որ 30 հազար մարդու պիտի թողնեն Արցախում, որպեսզի ռուս խաղաղապահներն էլ մնանգգգԽուճապ կար, բարձիթողի, անկազմակերպ վիճակ էր: Եթե վառելիքն անհատապես բաժանեին, այդ պայթյունը չէր լինի…

Ինտերնետային կապ չունեինք ու տեղյակ չէինք շատ բաներից, բայց, Արցախի նախագահն ասել է, որ 10 օրից պետք է բոլորը դուրս գան, այս պահին մեզ չեն կարող պաշտպանել, բայց հետագայում կվերադառնան… Ովքեր վառելիք ունեին՝ իրենց մեքենաներով կարող էին դուրս գալ, մյուսներին ավտոբուսներ էին տրամադրում…

-Հայաստանում որտե՞ղ եք տեղավորվել, քանի՞ հոգով:

-Սկզբում եկանք Նոր Հաճն, բարեկամի տուն, մեր ընտանիքով, նաև տատիկի և պապիկի հետ: Բայց ինչքա՞ն կարող էինք ապրել բարեկամի տանը. մենք ընտանիքով տուն վարձեցինք ու առանձնացանք: Նույն տարածքում դեռ Խորհրդային Միության տարիներից դատարկ մի տուն գտանք: Վարձու տների գները շատ բարձր էին, բայց չեմ մեղադրում, Ստեփանակերտում էլ էր նույն վիճակը 2020 թվականին: Պետությունը որոշ չափով օգնում է:

-Գոնե լավ է, որ անվճար եք սովորում…

-Ստեփանակերտում էլ մենք անվճար էինք սովորում, որովհետև բարձր միավորներ ունեինք:

-Իսկ ծնողներդ աշխատանք գտե՞լ են:

-Դեռ շրջափակման պատճառով հայրս ինն ամիս առանց աշխատանքի էր մնացել, տան միակ աշխատողը զինվորական եղբայրս էր: Նա երկու պատերազմի ժամանակ էլ առաջնագծում է եղել: Այժմ եղբայրս մեր տան միակ աշխատողն է, բանվորի աշխատանք է գտել:

Մեր ընտանիքը 6 հոգուց է բաղկացած: Հայրս, մայրս և 4 երեխա: Սկզբում տատիկի և պապիկի հետ էինք ապրում, նրանք Շուշիից են տեղահանվել և եկել Ստեփանակերտ, իսկ այժմ Հայաստանում նրանք ապրում են բարեկամի տանը: Ունեմ ինձնից մեծ եղբայր, որը զինվորական էր, երկու պատերազմից մազապուրծ փրկված:

-Իսկ դու ինչո՞ւ էիր ընտրել պատմաբանի մասնագիտությունը:

-Շատ էի սիրում: Ես մտածում էի՝ կարող է և պատմության ուսուցիչ չդառնամ, բայց հայրենիքիս պատմությունը կիմանամ: Չեմ ափսոսում: Հիմա այնպիսի վիճակ է ստեղծվել, որ ես կարող եմ իմ երեխային ճիշտ պատմություն մատուցել:

-Այսինքն հայրենաճանաչողությունը շատ ես կարևորում…

-Շա՜տ:

-Ի՞նչ երազանքներ ունես: Պատկերացնո՞ւմ ես դրանց իրականացումը…

-Մինչև տեղահանվելը ուրիշ երազանքներ ունեի, ուզում էի զբոսաշրջավար դառնալ, տեսնել Արևմտյան Հայաստանը: Ձեզ մոտ դա ուրիշ կերպ է դիտվում, մեզ մոտ այլ էր. ծնողներս վախենում էին Արևմտյան Հայաստան գնալու իմ մտքից…

-Հիմա չե՞ս ուզում այդ երազանքդ իրականացնել:

-Հիմա մի տեսակ խորթ է դարձել Արևմտյան Հայաստանը տեսնելու երազանք-ցանկությունս: Մինչև պատերազմը Արցախի գրեթե բոլոր տեսարժան վայրերում եղել եմ: Կուզեմ մի քանի անգամ էլ այցելել այդ նույն վայրերը:

Ամռանը, երբ դեռ վառելիքի պակաս կար, մեզ ավտոբուսներ էին տրամադրում, որ այցելենք Արցախի տեսարժան վայրեր: Դա շատ նպաստեց մեր հայրենաճանաչողությանը:

-Երևանում ինչպե՞ս եք զգում դու և ընկերուհիներդ:

-Տարբեր միջադեպեր են լինում, թեև դրանք երևի անհատական են. քաղաքային տրանսպորտում ընկերուհիներով մեր բարբառով էինք զրուցում, մի տղամարդ ասաց, որ իջնենք ավտոբուսից:

Մի անգամ էլ հորս տարիքի մարդիկ բարձրաձայն խոսում էին. «էս ղարաբաղցիք չէի՞ն կարող իրենց հայրենիքում մնալ և պաղեստինցիների նման կոտորվել, եկել այստեղ բոմժի նման ապրում են…»: Աշխատում ենք չնեղվել: Հասկանում ենք՝ մարդկային տեսակի խնդիր է…

-Իսկ Հայաստանի մասին շա՞տ բան գիտեիք, եղե՞լ էիք Հայաստանում:

-2020 թվականի 44-օրյա պատերազմի ժամանակ ապահովության համար հոկտեմբերին ընտանիքով տեղափոխվեցինք Հայաստան: Ճիշտ է, այդ ժամանակ չենք շրջել, ամեն րոպե սպասում էինք, որ պատերազմն ավարտվի և վերադառնանք Արցախ:

Մենք Հայաստան եկել ենք ես, փոքր քույրս, եղբայրս ու մայրս, իսկ հայրս ու մեծ եղբայրս, ազգակցական եղբայրներս մնացել էին Արցախում…

-Շրջափակման ընթացքում ամենաարտառոց դեպքերից ի՞նչ ես հիշում… Թեև ամեն ինչ ինքնին արտառոց էր…

-Հացի պակասը. վեց հոգանոց ընտանիքին օրվա համար ընդամենը հասնում էր 3 հաց: Հաց ասելը մեղմ էր… թեփով շաղախած, բայց մենք հումորով էինք վերաբերվում, ասում էինք՝ իսկական դիետա պահելու ժամանակ է: Թաղի երեխեքով հավաքվում էինք ու գնում հացի հերթերի… Ես նույնիսկ հաճույքով էի գնում: Հերթ գրանցելը ավելի դժվար էր, քան հաց ստանալը: Մինչև հերթը հասներ ինձ՝ 3 օր էր տևում: Գյուղերում ապրող բարեկամները վառելիք չլինելու պատճառով չէին կարողանում օգնել մեզ:

Սեպտեմբերի 19-ին սկսված պատերազմը, 20-ին դադարեցվեց, բայց Ստեփանակերտում Կրկժանի կողմից կրակոցներ էինք լսում և չգիտեինք՝ ինչ է կատարվում: Մեկ լսում էինք, որ Կրկժանը շրջափակված է, մեկն ասում էր՝ Ստեփանակերտի հրապարակում ազերիներն իրենց դրոշն են ուզում դնել. մեր տնից մինչև հրապարակ մի քանի մետր էր… Վախը սպանում էր մեզ ներսից…

-Կարծում ես վերադարձի հնարավորություն կլինի՞… Հույս կա՞…

-Դժվար: Նախկինում, երբ ծնողներս ազերիների հետ ապրում էին կողք կողքի, այդ վրեժխնդրությունը չկար… Հիմա, երբ ես իմանամ, որ թշնամին սպանել է եղբորս, ո՞նց կարող եմ նրա հետ կողք կողքի ապրել: Ամեն րոպե նա կարող է մտնել տունդ, դաժանորեն սպանել քեզ ու դուրս գալ…

Անընդհատ հետևում եմ լուրերին. Ադրբեջանը հորդորում է վերադառնալ և ապրել իրենց դրոշի ներքո, իրենց օրենքներով, իրենց անձնագրերով, որ կապահովի մեր անվտանգ վերադարձը: Բայց դա հնարավոր չի:

-Դասերը լա՞վ են անցնում մեր համալսարանում, ուսումնառության մասին ի՞նչ կասեք:

-Դեկանը և բոլորը մեզ շատ լավ ընդունեցին: Եթե խնդիր ենք ունենում, նախ ուսանողներին ենք դիմում: Խնդիրը հիմնականում մեր ինտեգրվելու մեջ է… Դե այստեղ մեզ մի քիչ վերապահումով են մոտենում… Բայց Ստեփանակերտում ավելի հեշտ էր սովորելը… Մի քիչ դեռ ամաչում ենք երևի:

-Շատ դժվար է ձեզ համար, հասկանում եմ, բայց լավատեսությունը չպետք է կորցնեք, որ կյանքը չիմաստազրկվի: Ապագայի ի՞նչ ծրագրեր կան:

-Մինչև տեղահանվելը մեր երազանքները սահմանափակ էին, միայն Արցախի շուրջն էին պտտվում… Հիմա էլ… Բոլորս սպասում ենք, որ մի լույս բացվի, ու վերադառնանք հայրենիք: Հարազատներից հեռու ենք, տարբեր մարզերում ենք տեղավորվել: Դեռ չեմ մտածել՝ ինչ եմ անելու: Ում հետ զրուցում եմ, ասում է՝ դե սպասենք, Արցախը յոր օնինք, նորից քինանք ապրինք (Արցախը հենց վերցնենք՝ նորից գնանք ապրելու):

Բոլորս դրան ենք սպասում: Այստեղ տնից նայելիս միայն շենքեր են երևում, իսկ Արցախի մեր բնակարանից միայն լեռներն էին տեսանելի:

-Մարիամ ջան, երբեք չկորցնեք լավատեսությունը:

-Չէ, սրտի մի անկյունում փայփայում ենք վերադառնալու հույսը:

Զրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳԱՆՁԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ

Հավանաբար երկար տարիների մտորումների, երազանքների, մարդու մեջ մարդկայինն արթնացնելու ձգտումից է ծնված այս ալբոմ-ժողովածուն, որի նախաձեռնողը բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Լիլիթ Տեր-Գրիգորյանն է: Այն կոչվում է՝ «Սերը՝ օրենք»:

Աստվածաշնչի Հին ու Նոր կտակարանները, համաշխարհային քրիստոնեական գրականության գրողները, նկարիչները, քանդակագործներն իրենց համամարդկային գաղափարախոսությամբ հանդես են գալիս ժողովածուի տարբեր էջերում՝ ընթերցողի հոգեկան աշխարհը հարստացնելով գեղեցիկի, սիրո, բարության, նվիրումի, ազնվության այնքան կարևոր զգացմունքներով ու գաղափարներով:

Լիլիթն ունեցել է երկու աջակիցներ՝ Արշավիր Գաբուճյանը և Սուսաննա Այվազյանը: Գիրքը տպագրական ցանկալի մակարդակով հրատարակել է «Էդիթ Պրինտ» տպագրատունը:

Առաջին հեղինակը, որի խոհերը մարդու մասին դիպուկ են, Վիլյամ Սարոյանն է, իսկ նրա գրվածքը զարդարում են հանճարեղ Մարտիրոս Սարյանի նկարները, որոնց լրացնում է նկարչի հավերժական արժեք ունեցող հետևյալ միտքը. «Հողը կենդանի էություն է. նա ունի իր հոգին: Եվ առանց հայրենիքի հետ սերտ կապի՝ չես կարող գտնել ինքդ քեզ, քո հոգին: Ես համոզված եմ, որ չի կարող առանց հողի նկարիչ լինել: Հողի սիրտը մարդու սրտում է գտնվում: Եվ ամեն ինչ սկիզբ է առնում այդ սրտից» (էջ 9):

Վերածննդի նկարիչների ու քանդակագործների գլուխգործոցները՝ գունավոր նկարներով ու ճշգրիտ բացատրություններով, զարդարում են գիրքը: Ռաֆայելի «Աստվածամայրը մանկան հետ», Բոտիչելլիի «Վեներայի ծնունդը», Միքելանջելոյի «Պիետան» ներկայացված են իրենց ցնցող արվեստով: Փոխվում են դարերը, փոխվում են տարբեր ազգերի ներկայացուցիչների գլուխգործոցները, սակայն ասելիքը մնում է նույնը:

Անտուան դը Սենտ Էքզյուպերիի «Փոքրիկ իշխանը» հրաշք գիրքը ներառված է «1001 գիրք, որ մարդը պետք է կարդա մինչև մեռնելը» հայտնի ժողովածուում: Այս գիրքն ունի փիլիսոփայական անսահման խորություն, այն երեխաների համար է, նաև մեծերի, որոնք մի ժամանակ երեխա են եղել: Ֆեոդոր Դոստոևսկու «Տղան Հիսուսի տոնածառին» գործը և իտալացի նշանավոր նկարիչ Տիցիանի «Խաչի կրումը» նկարը դրված են կողք կողքի (էջ 155):



Ալբոմ-ժողովածուն քննում է Աստծու՝ դեպի մարդն ունեցած սերը, նաև դրա հակադարձումը: Եթե այս երկուսը միասին են, մարդկային կյանքը կունենա ցանկալի առաջընթաց: Այս միտքը զբաղեցրել է հայ քրիստոնյա մտածողներին՝ սկսած հինգերորդ դարից մինչև մեր օրերը: Դրա համար էլ գրքում կա հինգերորդ դարի ոսկեղենիկ հայերենով աստվածաբանական մտքերը շարադրող Եզնիկ Կողբացին, տասներորդ դարի աստվածաշուրթ Գրիգոր Նարեկացին, հանճարեղ Հովհաննես Թումանյանը, մեր օրերում ապրած Աղասի Այվազյանը՝ Թիֆլիսի հայկական թաղամասի մարդկանց անմոռաց պատկերներով:

Գրքում կողք կողքի դրված են էջմիածնի Մայր տաճարի, Հռիփսիմե, Գայանե եկեղեցիների նկարները, որոնց ճարտարապետական արվեստի շնորհիվ, ըստ նշանավոր բյուզանդագետ Շառլ Դիլի, զարգացավ եվրոպական եկեղեցաշինությունը:

Որքան անմոռաց է Օ'Հենրիի «Վերջին տերև» պատմվածքը. այն Դավիթ մարգարեի սաղմոսների ու Սողոմոն Իմաստունի Իմաստության գրքի ու Ժողովողի պատվիրանների իրականացումն է մարդկային կյանքում:

Հիանալի է, որ այս ժողովածուում տեղ են գտել Հռոմի նշանավոր կայսր Մարկոս Ավրելիոսի ասույթները, որոնք այսօր էլ հիացմունք են պատճառում իրենց փիլիսոփայական խորքով ու վերժամանակյա մտքերով: Այդ կայսրը, լինելով հեթանոս, դադարեցրեց հալածանքը քրիստոնյաների դեմ՝ դեռևս Ք.ծ.հ. երկրորդ դարում:

Ճաշակով են ընտրված Վան Գոգի, Գուստավ Կլիմտի նկարները: Կլիմտի «Համբույր» նկարի գույները վերցված են Վենետիկի Սուրբ Մարկոսի տաճարի որմնանկարների երանգներից: Ժողովածուում տեղ են գտել 13-րդ դարի Կիլիկիայի մանրանկարչական դպրոցի լուսանցազարդեր, անվանաթերթեր, խորաններ, Հաղպատի վանքում գտնվող խաչքարի հարթաքանդակի նկար:

14-րդ դարի բանաստեղծ Կոստանդին Երզնկացին, որն առաջին սիրո երգիչն է հայ միջնադարյան քնարերգության մեջ, իր վարդի ու բլբուլի սիրավեպում ունի այն ճշմարիտ միտքը, թե տիեզերքի շարժիչ ուժը սերն է: Աստծու ստեղծած աշխարհը լի է սիրով.

Թէ սէր է ծառն ու սէր ծաղիկն,
ու սէր հաւուն ձայնն ի ծառին...

Այլաբանությամբ գրված այդ սիրավեպը պատմում է Քրիստոսի սերը մարդու նկատմամբ:

Բյուզանդական ու ռուսական սրբապատկերները ևս տեղ են գտել ալբոմ-ժողովածուում, ու բացատրվում է, թե բյուզանդական արվեստը ինչ ներգործություն է ունեցել ռուսականի վրա: Գրքում զետեղված են նաև 6-րդ դարում Կոստանդնուպոլսում կառուցված Սուրբ Սոֆիայի տաճարի խճանկարներից: Այդ տաճարը կառուցել է տվել Հուստինիանոսը, ու նրա խճանկարը եղել է տաճարի պատին:

Ժողովածուում կան առանձին բառերի բացատրություններ, նաև զետեղված են նշանավոր մտածողների՝ մարդկային հոգու մաքրության պահանջը ներկայացնող թևավոր խոսքեր:

Բերենք դրանցից մի քանի օրինակներ՝

Էռնեստ Հեմինգուեյ

«Սերը մարդու և աշխարհի միակ արարիչն է: Սերը համընդհանուր բնազդ: Այն իմաստնացնում է սիրողներին, պայծառացնում է նրանց միտքը, թարմացնում զգացմունքները, ոգևորություն է ծնում: Սերն ապրում ու ամրանում է տալով: Նրա կոչումը իր ունեցած ամեն ինչը և հենց սերը բաժանելն է»: (էջ 50)

Վինսենթ վան Գոգ

«Որքան շատ եմ մտածում, այնքան ավելի եմ համոզվում, որ չկա ավելի բարձր արվեստ, քան մարդկանց սիրելու արվեստը»: (էջ 62)

Վիկտոր Հյուգո

«Մի՛ հարցրեք այն մարդու անունը, որը ձեզնից օթևան է խնդրում. հենց անվան արտաբերումն է ճնշում այն մարդուն, որը ապաստանի կարիք ունի»: (էջ 186)

Մարկոս Ավրելիոս

«Եթե դու բարի գործ ես կատարել, իսկ մեկ ուրիշը զգացել-ապրել է այն, ուրեմն ինչո՞ւ ես հիմարներին նմանվելով՝ ձգտում ինչ-որ մի երրորդ բանի՝ բարի մարդու համբավի կամ պարգևի»: (էջ 186)

Լիլիթ Տեր-Գրիգորյանի կազմած «Սերն՝ օրենք» ալբոմ-ժողովածուն փաստահարուստ է և օրինակելի: Կարելի է ցանկալ, որ դրան ծանոթ լինեն ոչ միայն երիտասարդները, այլև հասուն տարիքի ամեն մի հայ:



Հայկական այբուբեբենը ԱՄՆ-ի Քլիցլենդ քաղաքի հայ մշակույթի այգում

Գևորգ Էմին

ՄԵՐ ԱՅԲՈՒԲԵՆԸ

Այբուբեն չէ սա՝
Բերդ է անմատույց,
Գանձ է աննվաճ,
Դուռ է փրկության,
Ելք, երբ հույս չկա,
Զարթոնքի նվագ:
Էությունն է մեր,
Ընթացքն ու ուղին,
Թագ ու զորավար,
Ժողովող մի կանչ,
Իմաստուն խորհուրդ,
Լինելու հնար:
Խարիսխը նավի,
Ծառը դպրության,
Կնիքն ինքնության,
Հացն հանապազօր հայի սեղանի,
Ջիրքերի հնձան:
Ղողանջը երգի, ղեկը ընթացքի,
Ճեմարան ճառի,
Մարգարան մտքի, մատյան հավատքի,
Յուղ՝ անմար ջահի:
Նախահիմքն է մեր,
Շողը մեր հույսի,
Ոգին մեր ճարտար,
Չինարին այգու,
Պարիսպը մեր տան,
Զրաղացն արդար...
Ռումբն է մեր ռազմի, ռունգը բնազդի,
ռահվիրան փառքի,
Սերն ու սիրտն է մեր, սերմը միշտ ծլող,
Վեմ ու վիմագիր:
Տունը ցամաքում, տապանը ջրում,
Ոսպեն սլացքում,
Ցորյանը արտում,
Ուղին անհայտում,
Փառքը սխրանքում:
Քիստ ու քաղն է մեր, քանքար ու քնար,
քարավան ու ափ,
Եվ
Օջախն անմար, օժիտն անհատնում,
Ֆե-ից մինչև Այբ:

ԱՊԱԳԱ ԼՐԱԳՐՈՂԻ ԷՋ

«Այսօր, երբ լսում ենք եթերից հնչող խոսքը, մտահոգվելու առիթ ունենք».

Գայանե Պողոսյան

Ինչպես ասում էր հայտնի գրող Սոմերսեթ Մոեմը, խոսքն ունի տեսք, գույն ու կշիռ: Սա, թերևս, կարելի է օգտագործել ամեն բնագավառում համեմատելու համար, թե ինչպես ենք օգտագործում մեր լեզուն, ինչ ենք ուզում փոխանցել հանրությանը: Լրագրության վարպետ երջանկահիշատակ Սերգո Երիցյանը սիրում էր ուսանողներին հիշեցնել, որ հեռուստատեսությանն անհրաժեշտ են գրագետ լրագրողներ: Նա չէր սիրում փոքր էկրանից երևացող հաղորդավարի դերում տեսնել այլ մասնագիտություն ունեցող մարդկանց, քանի որ ասում էր՝ յուրաքանչյուրն ունի իր մասնագիտությունը և չպետք է այն փոխարինի մեկ ուրիշով, ինչից ոչ մի հմտության չի տիրապետում:

Խոսքի մշակույթի ճիշտ օգտագործումը խրախուսելի է միշտ, բայց արդյո՞ք այն պահպանվում է հեռուստատեսային տարատեսակ հաղորդումներում, ծրագրերում, սերիալներում կամ էլ սիթքոմներում... Այս հարցի պատասխանը հարաբերական է, ինչի վերաբերյալ «Խոսքի մշակույթ» և «Լրագրության էթիկայի հիմունքներ» առարկաների դասախոս, լրագրող Գայանե Պողոսյանը մեկնաբանում է. «Այսօր, երբ լսում ենք եթերից հնչող խոսքը, մտահոգվելու առիթ ունենք»:

Մտահոգվելու առիթները շատ են, քանի որ փողոցային խոսքը գնալով փորձում է արմատավորվել եթերում՝ փոխարինելով գրական ու կիրթ խոսքին: Սա նկատվում է մանավանդ սիթքոմ-սերիալներում, երբ փորձում են փողոցային խոսքի ներմուծմամբ իրավիճակներն առօրյա և անմիջական դարձնել, չգիտակցելով, որ հեռուստատեսության գործառույթներից մեկն էլ հենց կրթելն է, որի անտեսումը կարող է բերել հասարակության վերաբերմունքի փոփոխման նաև հայոց լեզվի նկատմամբ: Բացի այդ, փոքր էկրանից երևացող մարդիկ թերանում են լեզվական հարցերում, որը խոսում է պրոֆեսիոնալիզմի պակասի մասին: Սերգո Երիցյանը նման դեպքերում առանձնացնում էր նաև խոսող գլուխներին, որոնք չնայած ծանծրալի հաղորդում վարելուն, նաև թերանում էին բանարվեստին վարպետորեն տիրապետելու գործում: «Եթե ես այսօրվա պատկերը համեմատեմ իմ աշխատանքային տարիների հետ, որոնք անցել են Հանրային ռադիոյում, ապա այն ժամանակ եթերից հնչող խոսքը դասական ու հղկված էր: Հիմա Հանրային ռադիոն էլ ավելի կիրթ խոսք է հնչեցնում, հակիրճ ու էթիկայի չափանիշներին համապատասխան, որի օրինակը կցանկանայի տեսնել հեռուստաեթերում, ինչով կպահպանվեր «տնավարիության» և «տնականի» սահմանը,- զրույցում նշում է տիկին Գայանեն, հավելելով, որ շատ դեպքում այդ սահմանը հատվում է այն ժամանակ, երբ լրագրողները շփոթում են երկու հասկացությունների իմաստը: Գրագետ խոսքի ձևավորման պարագայում պետք է հիշել հետևյալ հարցերը՝ ի՞նչ ասել, ինչպե՞ս ասել և որտե՞ղ ասել: Երբ մարդ գիտակցում է երեքի կարևորումը, ապա նրան չի խանգարում փողոցային խոսքը, քանի որ երեքի համադրումից ստեղծվում է գրագիտություն: Եթե դրա մասին մոռանում է լրագրողը, ապա եթերն անիմաստ է դառնում մարդկանց տեղեկացնելու, կողմնորոշելու, կրթելու գործում, ինչին նպաստում է նաև հեռուստադիտողների այն շրջանակը, որոնք չեն հասկանում, թե ինչու է պետք քննադատորեն մոտենալ ամեն հաղորդման՝ հասկանալու՝ ինչի են դիտում և ամեն տեսակ նյութ հավանում: Իսկ ինչպե՞ս լուծել այս խնդիրը, տիկին Գայանեն զրույցն ամփոփում է հետևյալ դեղատոմսով. «Կան հաղորդումներ, որոնք իրենց գործն անում են հենց կրթելով ու դաստիարակելով, սրան պետք է գումարվի անգամ մանկապարտեզից սկսած երեխայի մոտ գրագետ խոսք ձևավորելու աշխատանքները, տարիների ընթացքում շատ կարդալը, քանի որ գրագետ խոսքի ձևավորման առաջին աղբյուրը գիրքն է»: Իսկ հեռուստադիտողների վերը նշված շրջանակի վերաբերյալ ամփոփեց. «Խնդիրը պետք է լուծել հանրակրթական մակարդակով, որպեսզի մեդիագրագիտության, խոսքի մշակույթի, էթիկայի, գրագիտության դասավանդմամբ մանկավարժներն օգնեն վերլուծական տրամաբանություն զարգացնել, որպեսզի մարդիկ հասկանան՝ ինչ են դիտում, ինչ նպատակ ու ենթատեքստ ուներ տվյալ հաղորդումը և, ի վերջո, որն էր դրա իմիջը....իսկ մենք դրան սպասում ենք»:

Երևանում բացվեց ակապրասեր Սերգեյ Փարաջանովի արձանը

Հունվարի 9-ին կինեմատոգրաֆիան տոնում էր կինոռեժիսոր, դերասան Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյակը: Օրվա առթիվ Կինոյի տանը բացվեց Արա Ալեքյանի հեղինակած Փարաջանովի քանդակը, որը կառուցված էր երկաթե թափոններից ու տարատեսակ մեծ ու փոքր դետալներից: Այս միջոցառմամբ զարկ տրվեց Փարաջանովի հոբելյանական ծրագրերի մեկնարկին, որն իր խոսքում առանձնացրեց վարչապետի աշխատակազմի ղեկավարը. «Փարաջանովի ծննդյան միջոցառումները լինելու են ամբողջ տարվա ընթացքում, որի համար նախատեսել ենք 30 ծրագիր: Հոբելյանը նշելու ենք ոչ միայն Երևանում, այլև մարզերում և արտասահմանում: ...Այս տարի մենք նաև փորձել ենք մեր մեծերի բնագրերը միավորել, որովհետև նրանք որոշակի եզրերով միանում են միմյանց, և դրանով է՛լ ավելի հանրահռչակ է դառնում նրանց մշակույթը»:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը նշեց, որ նրանց առաջարկն առ այն, որ քանդակը տեղադրվի Կինոյի տան դիմացի հրապարակում և այն անվանակոչվի «Նռան գույնի» հրապարակ,

արդեն ուղարկվել է Երևանի քաղաքապետարան. «Սա շատ բնութագրական կլինի թե՛ արվեստի նշանավորման միջոցով արժանին մատուցելու մեր մաեստրոյին, թե՛ նաև մեր քաղաքի համար ստանալու ամենասիրված վայրերից մեկը»:

Փարաջանովի գործերի, նրա հանճարեղության և տաղանդի մասին խոսում են բոլորը, ոգեշնչվում շատերը, բացառություն չէր նաև արվեստագետ Դավիթ Գալստյանի ցուցադրությունը փարաջանովյան մոտիվներով:

«Փարաջանովն իր հանճարեղությունը, անշուշտ, գիտակցում էր, ասում էր «ես հանճար եմ»...»,- լրագրողների հետ զրույցում ժպիտով կիսվում էր կինոռեժիսորին երկար տարիներ նկարահանած լուսանկարիչ և վավերագրող Սերգեյ Մեչիտովը, հավելելով, որ նա սիրում էր կյանքի ամեն օրը, իսկ մարդկանց փոխանցում ազատասիրությունն ու գեղեցիկի ընկալումը:

Հեղինե ՄԽԻԹԱՐՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետի
Լրագրության բաժին,
3-րդ կուրս

Մկրտիչ ՍԱՀՐԱԴՅԱՆ

Երկրային կյանքին հրաժեշտ տվեց ՀՊՄՀ երկարամյա դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Մկրտիչ Սահրադյանը:

Նա երկար տարիներ դասավանդել է Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում, հիմնադրել է ամբիոնը, շահագրգիռ գործունեություն ծավալել գույք ու սարքավորումներ ձեռք բերելու ուղղությամբ:

1987-2009 թվականներին եղել է ամբիոնի վարիչ, ամբիոնը համալրել է երիտասարդ դասախոսներով:

Գործընկերները սիրով են արտահայտվում Մկրտիչ Սահրադյանի հետ աշխատած տարիների մասին:

«Ինֆորմատիկայի ամբիոնի երիտասարդ դասախոսների հանդեպ նա մեծագույն հոգատարություն էր ցուցաբերում թե՛ աշխատանքում, թե՛ ընտանեկան հարցերում: Մշտապես ուշադիր էր և հետևողական երիտասարդ կադրերի մասնագիտական առաջընթացին: Խրախուսում էր երիտասարդ և տարեց դասախոսների համագործակցությունը, փաստում, որ երիտասարդ դասախոսները տարեցներին գերազանցում են տեխնոլոգիաների կիրառման հարցում, բայց երիտասարդներին էլ պետք է նրանց փորձառությունը իրար օգնելու մեջ էր տեսնում ուսումնական գործընթացի արդյունավետությունը: Նա փոխհամագործակցային աշխատանքի կողմնակից էր:

Ամբիոնի երկարամյա վարիչը դասախոսների հետ հարաբերություններում որևէ տարբերակում չէր դնում. հավասարապես օժանդակում, աջակցում էր յուրաքանչյուրին, նրանց հետ ընկերություն էր անում, հաճախ էլ նրանց ընդունում ինչպես սեփական տղաներին:

Մկրտիչ Սահրադյանը նաև անաչառ մարդ էր, երբեք չէր դավաճանում իր սկզբունքներին»,- պատմում է մանկավարժական գիտությունների թեկնածու Գարիկ Էլոյանը:

Գիտության ոլորտում ևս նրա գործունեությունը արդյունավետ էր:

Այժմ ամբիոնում բոլորը երիտասարդ դասախոսներ են: Արդեն զգում են Մկրտիչ Սահրադյանի փորձառության և խորհուրդների կարիքը:

Գարիկ Էլոյանը հավելում է՝ Մ. Սահրադյանը մի մեծ գերդաստանի սիրված ու հարգված շառավիղն էր, բարեկամներին մեկ առանցքի շուրջ միավորող կերպար: Հայրենասեր, հայրենիքին նվիրվող մարդ էր, ամեն ինչ անում էր, որ շրջապատի մարդկանց օգտակար լինի, կիսի նրանց հոգսերը:

Ցավոք, ժամանակը չի խնայում ոչ մեկին: Պրոֆեսոր Մկրտիչ Սահրադյանն էլ կմնա Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հիշողություններում որպես լավ գիտնական դասախոս, որպես լավ գործընկեր, որպես լավ մարդու տեսակ:

Արդեն երեք տարի նա վայելում էր իր վաստակած հանգիստը, բայց շարունակում էր հարաբերությունները ամբիոնի գործընկերների հետ:

Համալսարանի ղեկավարությունը, պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները ցավակցում են ընտանիքին ու հարազատներին՝ Մկրտիչ Սահրադյանի մահվան կապակցությամբ:

Նրա հիշատակը վառ կմնա գործընկերների, ուսանողների և նրան ճանաչողների սրտերում:

Պողոս ՍԻՄՈՆՅԱՆ

87 տարեկան հասակում մահացել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պողոս Սիմոնյանը:

Պողոս Սիմոնյանը ծնվել է 1937 թվականին, ապրիլի 10-ին: Ավարտել է Մանկավարժական համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը: Պատմություն և գրականություն է դասավանդել հանրապետության տարբեր դպրոցներում:

1970 թվականից աշխատել է Հայկական պետական մանկավարժական ինստիտուտում՝ ուսումնական մասի վարիչ, միաժամանակ դասավանդել՝ որպես ավագ դասախոս:

1988-2006 թվականներին զբաղեցրել է Մանկավարժական համալսարանի Պատմության և աշխարհագրության ֆակուլտետի դեկանի պաշտոնը:

Երկար տարիներ Պողոս Սիմոնյանը դասավանդել է հարազատ բուհում, իր մասնագիտական բազմամյա փորձն ու գիտելիքները փոխանցել պատմաբանների բազմաթիվ սերունդների:

Մեծ է Պողոս Սիմոնյանի վաստակը ինչպես մանկավարժության, այնպես էլ պատմագիտության բնագավառում: 1970-ականներից, դասավանդմանը զուգահեռ, ծավալել է գիտական բուռն գործունեություն:

Նրա գիտական հետաքրքրությունների առանցքում եղել է 1890-ականներին հայկական հարցը և ռուս հասարակական միտքը, ինչպես նաև անդրադարձել է աբդուլհամիդյան կոտորածներին, արևմտահայության գաղթին դեպի Ռուսաստան, ռուսական մամուլում հայկական կոտորածների արձագանքներին և Հայկական հարցի հանդեպ ռուս հասարակական մտքին:

Պողոս Սիմոնյանի մահը մեծ կորուստ է գիտական հանրույթի և նրան ճանաչողների համար: Նա մշտապես վայելել է պրոֆեսորադասախոսական կազմի և գործընկերների սերն ու հարգանքը:

Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը ցավակցում է Պողոս Սիմոնյանի ընտանիքին: Նրա հիշատակը վառ կմնա գործընկերների, նրան ճանաչողների սրտերում:

Ուսանողի օրագրից

Մանկուց երազել եմ դառնալ ուսուցչուհի

Յուրաքանչյուր մարդու կյանքում ամենակարևոր ընտրություններից մեկը մասնագիտության ընտրությունն է: Այն ամբողջ կյանքում մեզ հետ է լինելու, և եթե մենք ճիշտ չընտրենք այն, չսիրենք մեր մասնագիտությունը, ապա մեր կատարած ամբողջ աշխատանքը կարժեզրկվի:

Ես դեռ մանկուց միշտ երազել եմ դառնալ ուսուցչուհի և այժմ, երբ իմ երազանքի իրականացման ճանապարհին եմ, է՛լ ավելի շատ եմ սիրում և հպարտանում իմ ընտրած մասնագիտությամբ:

Մարդկանց կրթելը նույնպես մշակույթ է, լուրջ և պատասխանատու առաքելություն, որն իրականացնում է մանկավարժը: Իսկ լավ մանկավարժ լինելու համար հարկավոր է ոչ միայն սիրել այն, ինչ դասավանդում ես, այլ նաև նրանց, ում դասավանդում ես: Մանկավարժը երեխայի մեջ ներդնում է հայրենասիրություն, հայրենիքի հանդեպ պարտքի ու պատասխանատվության վեհ զգացմունք, ինչը հայ ժողովրդի համար կարևորագույն խնդիր է:

Ուսուցիչ լինելու արվեստը նույնքան բազմակողմանի ու բարդ է, որքան ցանկացած արվեստ: Պատահական չէ, որ տարբեր ժամանակաշրջաններում մեծ դեր է տրվել ուսուցչի մասնագիտությանը: Այն իրենից ներկայացնում է շատ բարդ և պատասխանատու աշխատանք:

Լինել մանկավարժ՝ նշանակում է բազում երեխաների շրջապատել մայրական հոգատարությամբ, քնքշությամբ, սիրով և ուշադրությամբ, իսկ դրա դիմաց ստանալ դրական նոր լիցքեր և երեխաների մաքուր սերը: Եվ ես ուզում եմ հավատալ, որ տալով իմ մի սերն ու գիտելիքները, ներդնելով իմ հոգու և սրտի մի մասը յուրաքանչյուր երեխայի՝ ես այս աշխարհն ավելի բարի և լավն եմ դարձնելու:

Մանկավարժ լինելը կոչում է: Սա նշանակում է ցանկանալ և կարողանալ նորից ու նորից վերապրել մանկությունը յուրաքանչյուր երեխայի հետ, տեսնել աշխարհը նրա աչքերով, զարմանալ և սովորել նրա հետ, և անփոխարինելի լինել, երբ նա օգնության և աջակցության կարիք ունի: Ուսուցիչ լինելը նշանակում է լույս վառել երեխաների սրտերում, կոչ անել դեպի բարին:

Իմ տեսանկյունից ուսուցիչը բարի, հավատարիմ ընկեր է, մեկը, ումից մշտապես կարող ես օգնություն ակնկալել:

Ես իսկապես հավատում եմ, որ իմ աշակերտները կլինեն երջանիկ, և նրանց մանկության աշխարհը իմ կողքին կլինի գեղեցիկ ու ժիր, մաքուր ու նուրբ:

Ամբողջացնելով մտքերս՝ ուզում եմ վստահաբար ասել, որ ես չեմ զղջում իմ ընտրության համար և վստահ եմ, որ գտնվում եմ հենց այնտեղ, որտեղ պետք է լինեի:

Սոնա ԲԱԳՐԱՏՅԱՆ
Սկզբնական կրթության ֆակուլտետ
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա
3-րդ կուրս

Ես ապագա մանկավարժ եմ

Երբ ինձ հարցնում են, թե որտեղ եմ սովորում, հպարտությամբ պատասխանում եմ՝ Հայկական պետական մանկավարժական համալսարանում: Դրանից հետո տալիս են այլ հարց՝ ինչո՞ւ մանկավարժ... Ես ինքս էլ հստակ չեմ կարող ձևակերպել այս հարցի պատասխանը, սակայն կասեմ, որ երեխաների հետ աշխատելը, նրանց մեր մայրենի լեզվին ու գրականությանը հաղորդ դարձնելն ինձ համար գերագույն հաճույք է:

Շուտով կսկսվի մեր ուսումնաճանաչողական պրակտիկան, որը հնարավորություն է ընձեռում մեզ՝ ավելի մոտ լինել մեր ապագա մասնագիտությանը: Բանասիրական ֆակուլտետի և, առհասարակ, ՀՊՄՀ-ի դերն իմ կյանքում մեծ է: Այս գրեթե երկու տարիների ընթացքում շատ ձեռքբերումներ ու հաջողություններ եմ գրանցել, որոնց մասին շատ կարող եմ խոսել: Առանձնահատուկ ուզում եմ անդրադառնալ բանիմաց ու ստացավ դասախոսների տված գիտելիքներին և Ուսանողական խորհրդին: Դժվարություններ ու խնդիրներ առաջանում են ամեն տեղ, հետևաբար՝ նաև իմ ընտրած ճանապարհին: Սակայն մեծ պատասխանատվությամբ եմ մոտենում մասնագիտությանս՝ հայոց լեզվի և գրականության ուսուցչի աշխատանքին:

Աննա ԴԱՎԹՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, 2-րդ կուրս

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝
www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ